

«Կոնվերսիոն Թերապիա» և Թերապևտիկ ընտրություն, Միջազգային հռչակագիր

ՅՈՒՆԱԿԱԳԻՐ

1. «Կոնվերսիոն Թերապիա» արգելումը խախտում է մարդու իրավունքները և ազատությունները՝ վտանգի ենթարկելով ոչ միայն Թերապևտիկ ընտրության իրավունքը, այլև հովվական, պրոֆեսիոնալ և ծնողական իրավունքները: Տես ամփոփիչ փաստաթղթի 1-6 պարագրաֆները:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի նվազեցնել կամ փոխել չբավարարող կամ անցանկալի սեքսուալ զգացողությունները կամ արարքները՝ անկախ իր ունեցած դրոպապատճառներից, նպատակներից կամ արժեքներից: Սեփական զգացողություններն ու վարքը կենսաբանական սեռին համապատասխանեցնելը, որը պարզում է մարմնի մեջ հարմարավետության կամ սեփական արժեքներին ու համոզմունքներին համահունչ ապրելու իրական երջանկություն, մարդու իրավունք է: Ոչ մեկ չպետք է խլի մարդուց նրա այս իրավունքը և ազատությունը: Մարդիկ պետք է ազատ լինեն իրենց ընտրություններում, քաղաքական ուժերը, ակտիվիստները, հոգեկան առողջության ոլորտի մասնագետները չպետք է թելադրեն նրանց քայլերը:<https://iftcc.org/the-declaration-full-review-document/> - 1st

2. Մասնագիտական միությունները, որոնք առաջ են տանում խտրական միամշակույթ տեսակետեր, թույլ չեն տալիս գաղափարական բազմազանություն և քննադատություն: Տես ամփոփիչ փաստաթղթի 7-8 պարագրաֆները:

Մենք դատապարտում ենք հոգեկան առողջությամբ զբաղվող արևմտյան կազմակերպություններում ներկայումս առկա խտրական վերաբերմունքը, որը թույլ չի տալիս սեռականության և գենդերի մասին տարամիտվող տեսանկյունների գոյությունը՝ ոչ թե գիտական, այլ գաղափարախոսական հիմքերով: Սրանից առաջացել է անհանդուրժողականության միամշակույթ միջավայր, որտեղ ուսումնասիրությունները, դեկավարումը, ֆինանսավորումը, կոլեգիալությունը, վերահսկումն ու առաջնորդությունն իրագործվում են միայն մի տեսանկյունից: Այն մարդիկ, որոնք սատարում են փոխում թույլատրող Թերապիա անցանկալի նույնասեռ ձգողությունից, մասնագիտական խտրականության և մարգինալիզացման վտանգի առջև են կանգնում:

3. «Յիմնականում հետերոսեքսուալները»՝ ամենամեծ ոչ-հետերոսեքսուալ փոքրամասնությունը, մերժում են ստանում, երբ ցանկանում են օժանդակություն հետերոսեքսուալ դառնալու հարցում: Տես ամփոփիչ փաստաթղթի 9-11 պարագրաֆները:

Անհնար է անտեսել, որ հետերոսեքսուալությունից հետո ինքնության ամենամեծ խումբը «հիմնականում հետերոսեքսուալ» խումբն է: Ուսումնասիրություններն ասում են, որ ոչ-հետերոսեքսուալ փոքրամասնության մեջ, նույնասեռ ձգողությամբ անհատներն «աներկբաորեն» «նորմա» են, իսկ բացառապես միասեռ ձգողություն ունեցողները բացառություն են: Բիսեքսուալ նույնականացող մարդկանց գրեթե քառորդը ամուսնանում է՝ գրեթե միշտ հակառակ սեռի ներկայացուցիչների հետ: Երկու սեռերի նկատմամբ ձգողություն ունեցող մարդիկ իրենց հետերոսեքսուալ հարաբերություններում և նպատակների մեջ արժանի են օժանդակականության: Պետությունը պետք է երաշխավորի այս ազատությունը՝ հատուկ

հայտարարելով, որ նման օժանդակությունը «կոնվերսիոն թերապիա» չէ: Օժանդակող մասնագետները պետք է ազատ լինեն իրենց այցելուներին ներկայացնելու սեռական հնարավորությունների ամբողջ բազմազանությունը և չվախենալու, որ նման քայլը կարող է մեկնաբանվել որպես «կոնվերսիոն թերապիա» և պատժվել օրենքով:

4. Սեռական հոսունությունը տեղի է ունենում երկու ուղղություններով, սակայն սա անտեսվում է: Տես ամփոփիչ փաստաթղթի 12-17 պարագրաֆները:

Ամբողջ աշխարհում կատարված ծավալուն ուսումնասիրությունները հաստատել են, որ սեռական հոսունությունը կարող է տեղի ունենալ երկու ուղղություններով, որ շարժը կամ անցումը դեպի հետերոսեքսուալ ձգողություն հաճախ է տեղի ունենում, և սա չի վերաբերում միայն «հիմնականում հետերոսեքսուալներին»: Այս կաղապարը պակաս ճանաչված է: Կառավարությունները պարտավոր են առանց պաթոլոգիզացման պաշտպանել սեռական փոքրամասնությունների իրավունքները՝ նախընտրելու թե՛ նույն սեռի, թե՛ հակառակ սեռի հետ հարաբերություններ:

5. «Կոնվերսիոն թերապիայի»-ի արգելումը կընդարձակի «չեղարկման մշակույթը», կլռեցնի տարակարծությունն ու կխոչընդոտի ազատ խոսքին: Տես ամփոփիչ փաստաթղթի 18-25 պարագրաֆները:

Կառավարություններում և այլուր գտվող LGBS ակտիվիստները միախառնում են թյուր սահմանված «կոնվերսիոն թերապիա» եզրը (ներառյալ բարոյապես պախարակելի և պատմության ընթացքում լքված ավերսոն տեխնիկաները) ստանդարտ (հիմնականում հոգեդինամիկ, ապացույցների վրա հիմնված) թերապևտիկ գրույցների, հոսուն սեռական ձգողությունների ուսումնասիրությունների և հովվական գրույցների հետ, որտեղ անհատները ներդաշնակեցնում են իրենց կրոնական և սեռական եսերը: Կարևոր է նշել, որ «կոնվերսիոն թերապիա» եզրի կիրառումը որոշ երկրներում, օրինակ՝ Միացյալ թագավորությունում, կանոնակարգվել է այնպիսի բուժաշխատողների կողմից, որոնք անցյալում նշանակում էին բարոյապես պախարակելի ավերսիոն թերապիա, և ոչ այսօրվա խորհրդատուների և հոգեթերապևտների կողմից: Կոնվերսիոն թերապիային վերաբերող օրենսդրական արգելքները պարտադրում են սահմանափակումներ, տուգանքներ և քրեական մեղադրանքներ բոլոր ստանդարտ հոգեթերապևտիկ և խորհրդակցական մոտեցումներ առաջարկողների և հովվական խնամք տրամադրող անձանց դեմ, որոնք օգնում են անցանկալի նույնասեռ ցանկությունների և գենդերային շփոթմունքի հարցում օգնություն փնտրող անհատներին: Այսպես կոչված «կոնվերսիոն թերապիայի»-ի արգելումը պաշտպանող կողմը, գաղափարախոսական իր տեսակետն առաջ մղելու համար խոսքի մեջ կիրառում է չարական բառապաշար, օրինակ՝ «վնաս հասցնել» և «տանջանք պատճառել», որը խեղաթյուրում է պրակտիկայի իրական պատկերը:

6. Քաղաքական նկրտումները զոհաբերում են սեփական սեռի հարցում ճգնաժամ ապրող երեխաների և մեծահասակների համար խիստ անհրաժեշտ թերապիան: Տես ամփոփիչ փաստաթղթի 26-րդ պարագրաֆը:

Անչափահասների դեպքում «կոնվերսիոն թերապիայի»-ի արգելումը թույլ չի տա առաջարկել դիսֆորիա ունեցող երեխաներին այն, ինչը, օրինակ, Ֆինլանդիայի կառավարությունը, հիմնվելով հետազոտությունների վրա, սահմանել է որպես ԳԴ-ի համար առաջնահերթ բուժում: Վերջինս ներառում է հոգեբուժական այնպիսի խնդիրների բուժում, որոնք կարող են դեռահասներին նախատրամադրել ԳԴ-ի հայտնվելուն, այսինքն՝ հոգեբանական միջամտություն,

որն օգնում է նրանց հարմարավետ լինել սեփական կենսաբանական սեռի հետ՝ փոխանակ բժշկական միջամտությամբ նրանց մարմինները 25 տարեկանից վաղ փոխելու: Մինչդեռ այսպես կոչված բժշկորեն հաստատող խնամքը, որի դեպքում մարմինը համապատասխանեցվում է զգացողություններին, բավարար ապացուցված չէ, քանի որ երեխաների գենոթերը հաստատող բուժման երկարաժամկետ արդյունքների մասին հետազոտությունները քիչ են: Այնուամենայնիվ, առկա են բազմաթիվ ապացույցներ, որոնք շեշտում են այս մոտեցման վնասակար կողմնակի ազդեցությունները, ինչպիսիք են ամլությունը, անպտղությունը, ոսկրային զանգվածի կրճատումը, ձայնի փոփոխությունը և այլն:

7. «Կոնվերսիոն թերապիայի» արգելումն ապահով չէ, երբ տրավմայի և նույնասեռ ձգողությունների, «գենդերային դիսֆորիայի» միջև պոտենցիալ պատճառածին կապերը մնում են չուսումնասիրված: Տես ամփոփիչ փաստաթղթի 27-րդ պարագրաֆը:

Թեպետ ներկայումս չկան բավարար հետազոտություններ, որոնք կբացատրեին որևէ անցանկալի նույնասեռ վարքի կամ «գենդերային դիսֆորիայի»-ի պատճառները, պաշտոնական մարմինները անպատասխանատու կերպով շարունակում են առաջ տանել «կոնվերսիոն թերապիայի»-ի արգելումը: Նրանք դա անում են, թեպետ գիտեն, որ գոյություն ունեն պոտենցիալ պատճառածին կապեր, սակայն չեն կատարում անհրաժեշտ հետազոտություններ՝ պարզելու, թե ինչ դեր է խաղում տրավման նույնասեռ վարքի կամ «գենդերային դիսֆորիայի»-ի ձևավորման մեջ, և թե ինչպես ադեկվատ օգնություն ցուցաբերել նույնասեռ վարքից դիսթրես ապրող մարդկանց:

8. Փորձագիտական վերանայում անցած հետազոտությունները ցույց են տալիս, որ փոխում թույլատրող թերապիաները իրականում «վնաս» չեն հասցնում կամ չեն բարձրացնում սուլիցիդալության մակարդակը: Տես ամփոփիչ փաստաթղթի 28-31 պարագրաֆները:

Ի տարբերություն ՉԼՄ-ների տարածած զեկույցների՝ փորձագիտական վերանայում անցած նոր հետազոտությունները պարզել են, որ փոխում թույլատրող թերապիան չի մեծացնում սուլիցիդալության մակարդակը կամ վնասակար վարքագիծը: Այն հավանաբար նույնիսկ կրճատում է սուլիցիդալությունը՝ որոշ դեպքերում՝ զգալիորեն, անգամ այն մարդկանց դեպքում, որոնք շարունակում են նույնականանալ որպես ԼԳԲ, և որոնք չեն ապրել թերապիայի միջոցով ակնկալված փոփոխությունը: Ինքնազեկույցներ տրամադրելը կողմնակալ լրագրողներին, որոնք չեն ցանկանում ճշտել պնդումների իսկությունը կամ առաջարկել այլընտրանքային կարծիքներ, սովորական երևույթ է, ինչը բերում է այս հարցի շուրջ լայնամասշտաբ ապատեղեկատվության: Մենք կողմ ենք ենթադրյալ թերապևտիկ անբարեխղճության հետաքննմանը, եթե նկարագրվել են դեպքեր, որոնցում կա մեղադրանքի պաշտպանությանն աջակցող գոնե ամերևույթ ապացույց: Մենք կողմ չենք կողմնակալ ինքնազեկույցներին:

9. «Կոնվերսիոն թերապիայում» կոտանքի մասին պնդումներն անհիմն են և միտված են լռեցնել այլակարծությունը: Տես ամփոփիչ փաստաթղթի 32-36 պարագրաֆները:

Արևմտյան աշխարհում խոսքային թերապիայի ընթացքում կոտանքի մասին պնդումները անհիմն են: Սրանք օգտագործվում են որպես հարմար և էմոցիոնալ բեռնվածություն ունեցող զրպարտանք, որպեսզի վերահսկեն մեզ և մեզնից խլեն մեր ազատությունները: Չեն եղել դատական գործեր, որոնցում կապացուցվեր, որ լիցենզավորված պրոֆեսիոնալ անցանկալի ՆԱԶ-ի հետ գործ ունենալիս կիրառել է կոտանք կամ զեղծարար վերաբերմունք: Թվում է, որ թերապիայի արգելումն ու կոտանքը լիցենզավորված պրոֆեսիոնալ գործունեության հետ

կապելը նպատակ ունի երաշխավորել, որ նման արգելումը որևէ դեպքում չկարողանա վիճարկվել: Կոչ ենք անում նրանց, ովքեր հայտնում են զեղծարարության դեպքերի մասին, տրամադրել իրենց նշած կտտանքի հետ կապված հիմքերի հստակ վերլուծություններ:

10. Եկեղեցական առաջնորդները, որոնք զիջումների են գնում «կոնվերսիոն թերապիայի» ոչ անվտանգ արգելման հարցում, զրպարտում և խարխուլում են հովվական և պրոֆեսիոնալ խորհրդատվության պոտենցիալ կոմպլեմենտար դերերը: Տես ամփոփիչ փաստաթղթի 37-39 պարագրաֆները:

Մենք հաստատում ենք քրիստոնեական գրեթե, որոնք տարբերակում են գայթակղությունները գործողություններից: Չարկ է, որ քրիստոնյա համայնքը հստակեցնի «ամուրիություն», «ծուժկալություն», «ողջախոհություն» և նման այլ եզրերը: Միայն հովվական իրավունքների վրա կենտրոնանալը՝ անտեսելով եկեղեցուց դուրս գտնվող մարդկանց իրավունքները, կբերի նրան, որ քրիստոնեական հավատ չունեցող մարդիկ կգրկվեն օգնության հնարավորությունից: Կան շատ մարդիկ, որոնք, չլինելով հավատացյալ կամ ունենալով այլ հավատքներ, ջանում են հեռանալ LQFS ձգողություններից, վարքից կամ ինքնություններից: Քրիստոնեական ազատությունները չպետք է պահպանվեն այն մարդկանց իրավունքների հաշվին, որոնք մասնագիտական օգնություն են փնտրում եկեղեցուց դուրս: Աստվածաբանության տեսանկյունից պրոֆեսիոնալ և գիտահեն օգնությունը կարող է համարվել մարդկությանն ընծայված ընդհանուր հայտնության մի մաս: Մենք ընդունում ենք, որ վտանգավոր է «փոխումը» դարձնել կուռք կամ պնդել, որ կատեգորիկ փոխումից նվազ ամեն ինչ վկայում է հավատի պակասի մասին: Մինչ թերապևտիկ օգնությունն անհրաժեշտ և բավարար չէ հավատացյալների համար, այն կարող է նպաստել այլ հավատք ունեցող մարդկանց հոգևոր աճին և բարօրությանը: Բոլոր քրիստոնյաները չեն, որոնք, որպես իրենց քրիստոնեական համոզմունքների մաս, ընդունում են պրոֆեսիոնալ թերապիան և, հետևաբար, պրոֆեսիոնալ թերապիայում կրոնական ազատությունը, սակայն կան նաև այդպիսիք: Եթե որոշ մարդկանց կրոնական ազատությունը կարող է օտարվել, ապա արդյո՞ք հերթը չի հասնի մյուս ազատություններին:

Ստորագրված է Փետրվարի 16-ին, 2022

Dr Mike Davidson
Դոկտոր Մայք Դեյվիդսոն
ԹԻՆԸՄՑ Գործադիր խորհուրդ

Dr Laura Haynes
Դոկտոր Լաուրա Հեյնս
ԹԻՆԸՄՑ Ընդհանուր խորհուրդ

Dr (Med) Peter May
Դոկտոր (Բժշկ.) Պիտեր Մեյ
ԹԻՆԸՄՑ Գիտական և հետազոտական խորհուրդ